

ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (ՌՈՔԵՐՏ ԿՐՈՌԼԻ)

Ն. Ն. ԳՈՄԱՐՏԵԼԻ (ԹԲԻԼԻՍԻ)

16-րդ դարի Անգլիայում տարածում գտած հասարակական-քաղաքական մտքի համապատկերում յուրօրինակ տեղ ունեն Ռոքերտ Կրոուլիի հայացքները:

Ռոքերտ Կրոուլին ծնվել է 1518 թ., 1534-42 թթ. սովորել է Օքսֆորդի համալսարանում, իսկ 1549-1551 թթ. զբաղվել է հրատարակչական գործունեությամբ: Կրոուլին հայտնի է որպես իր ժամանակի հասարակական հակասություններին կտրուկ արծագանքած քաղաքական մտածող ու հրապարակախոս: Նա հանդես է եկել որպես արմատական-կրոնական ռեֆորմացիայի քարոզիչ: Մարիա Թյուդորի գահակալության (1553-1558) և կաթոլիկական հետադիմության տարիներին Կրոուլին եղել է վտարանդիության մեջ Մայնի Ֆրանկֆուրտում և Անգլիա է վերադարձել միայն Ելիզավետա 1-ի (1558-1603) գահ բարձրանալուց հետո: Կրոուլին մահացել է 1558 թ.¹:

Ռոքերտ Կրոուլիի հասարակական-քաղաքական հայացքները շարադրված են նրա երկու գլխավոր ստեղծագործություններում, որոնցից առաջինը կոչվում է «Տեղեկատվություն և հանրագիր ընդդեմ այս բազավորության ընչազուրկ համայնքների շահագործողների» («An Informacion and Peticion against the Oppressours of pure Commons of this Realm»): Այն լույս է տեսել 1548 թ., Ռոքերտ Քեթի գլխավորած ապստամբության նախօրեին: Երկրորդը «Մանապարհի դեպի հարստություն» պարսավազիրն է («The Way to wealth, wherein is plainly taught a most present Remedy for Sedicion»), որը լույս է տեսել արդեն այդ ապստամբության ճնշումից հետո՝ 1551 թ.²:

Այս աշխատությունների մեջ կարեկցանքով են պատկերված կապիտալի մախնակզբնական կուտակման շրջանում անգլիական գյուղացիությանը վիճակված աղետներն ու տառապանքները: Այդ ժամանակ երկրի տարբեր շրջաններում բռնկված ընդվզումների հիմնական պատճառը Կրոուլին տեսնում է համայնքների աղքատացման ու գյուղացիների չքավորության մեջ: Նա գրում է. «Եթե հարցնենք աղքատին, թե ում է համարում ընդվզումների համար մեղավոր, նա կպատասխանի. հարուստ ֆերմերները, անասնաբույծները, օրենսգետները, առևտրականները, ջեմքլմենները, ապպետները և լորդերն անխիղճ մարդիկ են, որոնք հանում շահի ընդունակ են ամեն ինչի... Այդ մարդիկ խլում են մեր տները, ազգրավում են մեր հողերը, բարձրացնում ռենտան (որը մենք վճարում ենք նրանց), ցանկապատում են մեր համայնքային հողերը... Ոչ սովորույթը, ոչ օրենքը կամ օրենսդրությունը չեն կարող նրանց զսպել մեզ շահագործելուց: Նրանք մեզից խլում են այն ամենը, ինչ ծանր աշխատանքով ձեռք ենք բերել երիտասարդության ժամանակ, իսկ ծերության ժամանակ մենք դատապարտված ենք մորալու՝ հուսալու, որ նրանք մեզ կնետնեն իրենց սեղանների վշրանքները»³: Դժվար չէ տեսնել, որ իր հայացքներով Կրոուլին համակրում է չքավոր համայնականներին, այսինքն՝ ունեզրկված գյուղացիներին: Դիմելով լորդերին՝ նա ասում է, որ գյուղացիներն ապստամբում են ոչ ծուլությունից, ամբարտավանությունից ու ժլատությունից, ինչպես մտածում են լորդերը: Հենց լորդերն են խախտում օրենքներն ու սովորույթները⁴: Գյուղացիների ապստամբություններն ընդդեմ լորդերի Կրոուլին համարում է

¹ Տե՛ս՝ «The Dictionary of National Biography», Vol. 5, Oxford, 1950, էջ 241-243:

² Ռոքերտ Կրոուլիի այս երկու ստեղծագործությունները և այլ հոդվածներ ամփոփված են «Select Works of R. Growley (London, 1872) գրքում:

³ Նույն տեղում, էջ 132-133:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 144-145:

գյուղացիների հանդեպ նրանց գործած մեղքերի համար աստվածային պատիժ: Բայց լորդերը կարող են քավել իրենց մեղքերը՝ վերադարձնելով այն ամենը, ինչ նրանք ապօրինաբար վերցրել են գյուղացիներից⁵: «Եթե դուք հետագայում ևս կձգտեք ստրկության մեջ պահել Անգլիայի համայնքները,- գրում է Կրոուլին,- ապա կկործանեք ինքներդ ձեզ, որովհետև, եթե նրանք դիմեն Աստծուն, ապա նա կմարտնչի հանուն նրանց»⁶:

Առաջին հայացքից Կրոուլին բավականին հստակ էր հասկանում գյուղացիության շահերը, բացի այդ բացահայտելով գյուղացիական ապստամբությունների իրական պատճառները, դրանով իսկ, ասես, արդարացնում է նրանց: Բայց իրականում դա պարզապես թվում է: Թեև Կրոուլին ընդունում է, որ գյուղացիական ապստամբությունների մեղավորներն ու պատճառները բնավ էլ ապստամբողների արատները չեն, բայց և այնպես ապստամբությունների հանդեպ նա դրսևորում է հակասական վերաբերմունք: Այդ հակասականությունն ի հայտ է գալիս սեփականության և հասարակության դասային կառուցվածքի հանդեպ նրա ունեցած ըմբռնումներում: Խիստ հետաքրքրական են սեփականության մասին նրա դատողությունները: Խոսելով այն մասին, որ սեփականատերերը պետք է համայնականներին վերադարձնեն հանիրավի նրանցից խլված գույքը, Կրոուլին շտապում է հայտարարել, որ ինքը բնավ էլ չի ձգտում համոզել մարդկանց՝ բոլոր իրերը դարձնելու ընդհանուր⁷: «Բայց ես կցանկանայի միայն,- գրում է նա,- որպեսզի սեփականատերերը հիշեին, թե ով և ինչի համար է նրանց տվել իրենց տիրույթները, այդ դեպքում հարկ չէր լինի բոլոր իրերը դարձնելու ընդհանուր»⁸: Ընդհանուր սեփականության հաստատման կարիքը, որի կոչն էին անում, ըստ Կրոուլիի, Պողոս առաքյալը և վաղ քրիստոնեական եկեղեցին, չի զգացվի, եթե դադարի լորդերի կողմից սեփականության անսահմանափակ տնօրինումը: Երբ սեփականատերերը կսկսեն իրենց համարել ոչ թե ունեցվածքի սեփականատերեր, ոչ թե լորդեր, այլ միայն իրենց տիրույթների կառավարիչներ, որոնք ազատ չեն իրենց ունեցվածքի հետ վարվելու այնպես, ինչպես իրենք են ցանկանում, աղքատ համայնքների շահագործումը կդադարի: Այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն կունենա իրենց սեփականությունը անսահմանափակորեն ամօրինելու լորդերի իրավունքը, հնարավորություն չի լինի վերացնելու աղքատ համայնականների շահագործումը և վերականգնելու նրանց իրավունքները⁹: Իր այս դրույթը Կրոուլին հիմնավորում էր այն բանով, որ խոշոր կալվածատերերի սեփականությունը հմուց ի վեր նրանց չի պատկանել: Դիմելով նրանց՝ նա գրում է. «Ձեր բնությանբ դուք կարող եք հավակնել միայն այն բանին, ինչը ձեռք եք բերում ձեր քրտինքով, բնական օրենքով ամբողջ հողը պատկանում է բոլոր մարդկանց, և նրանք բոլորը նրա նկատմամբ ունեն ժառանգական իրավունք: Իսկ դուք խոշոր կալվածատերեր ու կառավարիչներ եք, որովհետև Աստված ձեզ դարձրել է այդպիսին, որպեսզի դուք հետևեք, որ ուժեղը չշահագործի թուլին ու տկարին»¹⁰: Կրոուլին խոշոր կալվածատերերին համոզում էր կատարել ոչ թե համայնականներին շահագործողների, այլ Աստծու կողմից նշանակված պաշտպանների դեր: Նա փորձում էր հավանացնել, որ միայն այդ ճանապարհով նրանք կարող են վերացնել խռովությունների պատճառները և խուսափել դրանց մասնակիցների վրեժխնդրությունից¹¹:

Այդ տեսակետից հետաքրքիր է, որ կանգնած լինելով ֆեոդալական հասարակարգի դասային-միջրապետական կարգն արդարացնող հասարակության միջնադարյան օրգանական տեսության դիրքերի վրա՝ Կրոուլին այդ տեսությունը կիրառում էր ոչ այնպես, ինչպես այդ տեսության մյուս կողմնակիցները: Վերջիններս սովորաբար ընդգծում էին, որ հասարակական, ինչպես և բնական օրգանիզմի բոլոր անդամներն անգոր են առանց գլխի, ուրիշ նրանք պարտավոր են ենթարկվել անառարկելիորեն: Իսկ Կրոուլին շեշտում է, որ թե մեկի և թե մյուսի ոչ միայն ստորին անդամներն են կարիք գզում վերինների, այլև վերինները չեն կարող գոյություն ունենալ առանց ստորինների, ուստի և պարտավոր են մշտապես հոգավ նրանց մասին... և պաշտպանել նրանց ամեն կարգի աղետներից¹²:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 147:

⁶ Նույն տեղում, էջ 149:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 156:

⁸ Նույն տեղում, էջ 157:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 156-157:

¹⁰ Նույն տեղում, էջ 163-164:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 150:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 168-169:

Միջնադարյան Եվրոպայում լայնորեն տարածված էր Թովմաս Արվինացուց եկող այն գաղափարը, որ ֆեոդալական սեփականության տիրապետությունը ոչ այլ ինչ է, էթե ոչ ֆեոդալների համար աստուածուստ սահմանված պարտականություն: Այն քարոզում էին նաև 16-րդ դարի Անգլիայում շատ հրապարակախոսներ, մասնավորապես Թ. Ստարկին, Ջ. Չիկլը և ուրիշներ¹³ նպատակ ունենալով ապացուցելու դասային կարգն ու հասարակության մեջ ֆեոդալական դասակարգի գերիշխող դրությունը: Ինչ վերաբերում է Կրոուլին, ապա այդ գաղափարի նրա մեկնաբանությունը յուրօրինակ է: Եթե այդօրինակ հայացքներ զարգացնող հրապարակախոսների մեծամասնությունը ջանում էր դրանց օգնությամբ ապացուցել, որ գոյություն ունեցող ֆեոդալական հարաբերությունները պարտականության (stewardship) սկզբունքի լիակատար իրացումն են, ապա Կրոուլին իրերի գոյություն ունեցող վիճակը համարում էր այդ սկզբունքի խախտում, կոչ էր անում հասնելու դրա իրականացմանը, և դա սպասվում էր ապագայում: Այլ կերպ ասած, Կրոուլիի մախորդների և ժամանակակիցներից շատերի համար պարտականության սկզբունքի քարոզը միջոց էր գոյություն ունեցող դրության պահպանման և ամրապնդման, իսկ նրա համար այդ սկզբունքի վկայակոչումը ծառայում էր ֆեոդալական շահագործման եթե ոչ վերացման, ապա էապես մեղմացման անհրաժեշտության ապացուցմանը և որոշ իմաստով նաև հանուն իրենց իրավունքների գյուղացիների մղած պայքարի փաստացի արդարացմանը:

Հատկանշական է, որ լինելով խոռվությունների սկզբունքային հակառակորդ և քարոզելով հնազանդություն իշխանություններին՝ Կրոուլին, սակայն, ընդգծում էր, որ դեռևս խոշոր հողատերերին գյուղացիների հնազանդության դադարեցումից առաջ խոշոր հողատերերը դադարել էին հնազանդվել բռնության ու շորթման ցանկացած ձև արգելող օրենքին և գործում էին ընդդեմ խղճի, որը հիմքն է բոլոր բարի օրենքների:

Պատասխանելով խոշոր հողատերերի բողոքներին իրենց սեփականության հանդեպ ունեցրված գյուղացիների կողմից կատարվող ոտնձգությունների հաճախակի դարձած դեպքերի դեմ՝ Կրոուլին բացականչում է. «Եթե նրանք գողանում ու կողոպտում են, ապա մեղավորը դուք եք, քանզի դուք ցանկապատել եք՝ նրանց հողերը»¹⁴: Ընդսմին, Կրոուլին դատապարտում է ամեն կարգի խռովություն, հատկապես թագավորի դեմ ուղղված ժողովրդական ապստամբությունները: Նա ցույց է տալիս, որ ժողովրդի շահագործողների կատարած չարագործությունների համար պատժելը թագավորի գործն է, և շահագործվողներից նրանք, ովքեր դա վերցնում են իրենց վրա, հափշտակվում են թագավորի արտոնությունը, հետևաբար և՛ Աստծու արտոնությունը, որովհետև թագավորը լոկ աստվածային կամքի կատարողն է և կոչված է վրեժ լուծելու անմեղներին պատճառված անարդարությունների համար: Այս դատողությունները Կրոուլին ավարտում է ճշվածներին ուղղված հետևյալ խորհրդով. «Ավելի լավ է թույլ տալ իրեն կտրատել, քան ըմբոստանալ ընդդեմ թագավորի»¹⁵, քանզի թագավորական իշխանությունը արդյունք է աստվածային սահմանման, և ոչինչ չի կարող արդարացնել նրա դեմ հանդես գալը¹⁶: Բայց Կրոուլիի կտրուկ դատապարտմանն արժանանում են ոչ միայն հակաթագավորական ապստամբությունները: Նա պահանջում է ամճուռնչ հնազանդություն թագավորական իշխանությանը: «Իմենեին վայել չէ քննարկել, թե ինչի համար են պետք թագավորական հարկերը, նրա գործն է վճարել դրանք»,- գրում է նա «Վերջին շեփորի ծայրը» պարսավագրում¹⁷:

Կրոուլիի հայացքներում մի կողմից վառ արտահայտություն է գտել անգլիական գյուղացիության բողոքն ընդդեմ կապիտալի մախասկզբնական կուտակման շրջանում տեղի ունեցած ցանկապատումների և այլ բռնարարքների հետևանքով իր վիճակի կտրուկ վատացման, որն, անկասկած, վկայում է գյուղացիության դասակարգային գիտակցության աճի մասին: Մյուս կողմից Կրոուլիի հայացքներում դրան որվել է նաև գյուղացիության թուլությունը, վերևից կատարվող ռեֆորմների, հին հայրիշխանական մանրիիալ բարքերին վերադառնալու նրա հույսը, այդ բարքերի իդեալականացումը և, իհարկե, միապետական պատ-

¹³ Տե՛ս Ն. Նաթան, Թովմաս Արվինացու փիլիսոփայությունը, Թբ., 1973 (վրացերեն): Ա. Գելաշվիլի, Ժամանակակից կրոնը և Աստծու գոյության «հիմնավորման» հարցը, Թբ., 1970 (վրացերեն):

¹⁴ «Select Works of R. Grouley», էջ 164:

¹⁵ Նույն տեղում, էջ 134:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 135:

¹⁷ A. Ferguson, The articulated citizen and the English Renaissance, Durham, 1965, p. 157:

րանքները՝ հավատը հանդեպ բարի միապետը, որը կփրկի նրանց իր պաշտոնյաների և խոշոր հողատերերի պատճառած անարդարություններից: Հետևաբար, Կրոուլիի գաղափարներում արտացոլվել են ֆեոդալիզմից կապիտալիզմին անցման շրջանի գյուղացիական շարժման թե՛ ուժեղ և թե՛ թույլ կողմերը: Ռոբերտ Կրոուլին արտահայտում էր հիմնականում գյուղացիության սեփականատիրական շերտերի շահերը: Աղքատ գյուղացիների շահերն արտահայտում էին գերազանցապես նրանք, ովքեր քարոզում էին հավասարության և ընդհանուր սեփականության սկզբունքները¹⁸:

Н. Н. Гомартелу (Тбилиси).- Из истории общественно-политической мысли Англии (Роберт Кроули).- В спектре социально-политических идей, распространяемых в Англии XVI века своеобразное место занимают воззрения Роберта Кроули. Социально-политические взгляды Р. Кроули изложены в двух главных произведениях: в трактате "Информация и петиция против угнетателей бедных общин этого королевства" и в памфлете "Путь к богатству". В обоих произведениях с сочувствием изображены бедствия и страдания, обрушившиеся на английское крестьянство в период первоначального накопления капитала.

Р. Кроули выражал чаяния народных масс, в идеях отразились и сильные и слабые стороны крестьянского движения в переходный период от феодализма к капитализму.

¹⁸ См. Ю. М. Сапрыкин, Социально-политические взгляды английского крестьянства в XIV-XVII вв., М., 1972: